**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**
**<<Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում>>**
**փակ բաժնետիրական ընկերություն**

---

ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր

N Մ-6
27 հունվարի 2015թ.

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի
միջոցով գնում կատարելու
ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքը՝ <<Ռեգուլյար>> բենզին:

Սույն հրավերի /ծանուցման/ ծածկագիր է հանդիսանում <<ՌԹՎ-ՇՀԱՊՁԲ-11/1-15/1>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր, 1-ին հարկ, N 4 սենյակ հասցեով, մինչև 2015թ. փետրվարի 09-ը, ժամը՝ 12.00: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Անահիտ Հակոբյանը (Հեռ. 091 35 45 37):

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ՀՀ, Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր հասցեով 1-ին հարկ, N 4 սենյակում, 2015թ., փետրվարի 09-ին, ժամը 12.00-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում>> ՓԲԸ-ի կարիքների համար <<Ռեգուլյար>> բենզինի ձեռքբերումը կտրոնային տարբերակով:

<<Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում>> ՓԲԸ-ի կարիքների համար <<Ռեգուլյար>> բենզինի մատակարարման /որը կազմված է 1 չափաբաժնից/ տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են

պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի /ծանուցման/ N 1.1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում /Հավելված N 5/, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ /Հավելված N 5.1/: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>> ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում>> ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ radonarm@yahoo.com:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ /լրացուցիչ/ փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով /ծանուցմով/՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան /կոնկրետ/ դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և / կամ տվյալները:

Առդիր՝ 12 էջ:

<<Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
ՄԻՔԱՅԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ
Հեռ. 091405349, 055088885